

«Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային,
գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի
օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների»
կառուցման նախագծի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ



«ՀԳՇՆ» ՍՊԸ տնօրեն՝

Բնապահպանության մասնագետ՝

Վ. Հովասափյան

Ք.Սահակյան

Երևան,
Սեպտեմբեր 2020

Բովանդակություն

_Toc51270775

Հապավումներ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
□ Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ	7
□ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը	7
□ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը	7
□ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը	7
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	8
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
3.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	9
3.2. Ջրամատակարարում և ջրահեռացում	15
3.3. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխություն	16
3.4. Շինարարական աշխատանքների կազմակերպում	17
3.4.1. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ	20
5 ավտոմեքենաներ	20
3.4.2. Քանդման և հողային աշխատանքներ , օգտագործվող բնառեսուրսներ	21
3.4.3. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա	23
4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	26
4.1. Տեղանքի ռեփեֆը և երկրաբանությունը	26
4.2. Սեյսմիկ բնութագրերը	28
4.3. Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը	28
4.4. Օդային ավազան	28
4.5. Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում	29
4.6. Ջրային ռեսուրսներ	29
4.7. Բուսական աշխարհ	30
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	30
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	34
6.1. Բնապահպանական կառավարման պլան	34
6.2. Մոնիտորինգ	34
7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	35
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	36

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ և
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....37

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 39

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ..... 40

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ..... 40

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ..... 43

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԱՐԱԾՔԻ ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ 44

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)..... 46

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....64

Հապավումներ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայության
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԸԱԱ	Ընդհանուր անօրգանական ածխածին
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՀՀ	Հայաստանի Հանրապետության
ՀՀՔԿ	Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության Կոմիտե
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր
ՇՄՆՄԿ	Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Պետության կարիքների համար «Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճի» կառուցման նախագիծ
Ծրագրի նպատակը	Պետության կարիքների համար
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«ՀԳՇՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք.Երևան, Կիևյան փող. 16
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս`	Էլ. փոստ` hgsnvh@gmail.com Հեռ.` (+374) 10 274 307
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Բագրատունյաց 48
Կառուցապատվող տարածքի մակերեսը	1813 ք.մ
Մարզադպրոց նախագծային հզորությունը	262 սան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի Բազրատունյաց 48 հասցեում գտնվող Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճի կառուցումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջետային միջոցների հաշվին՝ պետական կարիքների համար:

Նախագիծը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է սեյսմակայունության ապահովմանն, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են Գ կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:

Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճի կառուցապատման տարածքի մակերեսը գնահատվում է 1813 ք.մ և համաձայն սույն օրենքի պահանջում է ՆԳՀ-ի մշակում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և համապատասխան բնապահպանական պետական փորձագիտական եզրակացության ստացում:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

➤ **Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ**

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի համար, որը հանդիսանում է նախագիծն իրականացնող մարմինը, մշակել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը: Փաստաթուղթը ներառում է նաև բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, կազմակերպումը և Բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

➤ **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

➤ **Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը**

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

➤ **Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող մարզադպրոցի աշխատանքային նախագիծը
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները,
- քարտեզները
- նախագծի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014) (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11-Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003)

պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված «Շինարարական աղբի կառավարման» ուղեցույցները:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախագծվող Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Շենգավիթ վարչատարածքային համայնքում, Բագրատունյաց 48 հասցեում գտնվող մարզադպրոցի տարածքում (նկ.1):

Նոր կառուցվող մարզադպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 1813մ², որը տեղակայված է լինելու նախկին մարզադպրոցի տարածքում: Այն նախատեսված 262 սաների համար՝ բաղկացած է 2 վերգետնյա մասնաշենքերից: Մարզադպրոցի ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 4195մ²:

Տարածքի իրադրության սխեման և Երևանի քաղաքապետարանի կողմից տրված և հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվությունը) բերված են [հավելված 1](#)-ում, իսկ անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ [հավելված 2](#)-ում:



Նկար 1. Ներկայումս գոյություն ունեցող մարզադպրոցի արտաքին տեսքը

Մարզադպրոցի նախագծման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը.

- ճարտարապետահատակագծային առաջադրանքը և տեխնիկական պայմանները (ստորև ներկայացված է պատճենը),
- շենք-շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը,
- արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը,
- ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացությունները,
- նախագծային առաջադրանքը,
- հանույթը և չափագրությունները,

Նախագծի մշակումն իրականացվել է հետևյալ նորմատիվային պահանջների համաձայն.

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014թ. ՀՀՇՆ 31-03.012014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին N 103-Ն հրաման (որպես խորհրդատվական),
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 ՀՀՇՆ 30-0-12014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 13.12.2007թ. «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կադմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ. N 532 և 03.05.2001թ. որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում,
- ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ. N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ. թիվ 87-Ն հրաման,
- ՄՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և շինություններ»,
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ. «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց

համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման,

- ՀՀ առողջապահության նախարարի 27.10.2018թ. «Մանկապատանեկան մարզադպրոցների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող պահանջներ» N2.1.2.002-18 սանիտարական կանոնները հաստատելու մասին» N25-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»,
- «Պատմության և մշակույթային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք,
- ՀՕ-110-Ն 21.06.2014թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները:

Նախագծով նախատեսված է հետևյալ աշխատանքների իրականացումը.

- ՀՀ Քաղաքաշինության պատվերով տեխնիկական առաջադրանքի համաձայն հետազոտվել է հեծանվային սպորտդպրոցի հին մասնաշենքը «ՇԵՄՔ» ՍՊԸ-ի կողմից, և տրվել է եզրակացություն, որ շենքը ֆիզիկապես մաշված է և գտնվում է IV-րդ կարգի վթարային վիճակում: Անվտանգության նկատառումներից ելնելով, այն պետք է քանդվի մինչև շինարարական աշխատանքների սկիզբը:
- **Մասնաշենք 1:** Գեղարվեստական մարմնամարզություն և ակրոբատիկա պարապելու համար նախագծվել է դահլիճ՝ իր օժանդակ շինություններով (ընդհանուր մակերեսը՝ 1076մ²):
- **Մասնաշենք 2:** Տեխնիկական առաջադրանքի համաձայն հեծանվային սպորտդպրոցի համար նախագծվել է նոր երկհարկանի մասնաշենք, որի ընդհանուր մակերեսը կազմում է 1280մ², ներառյալ 156մ² մակերեսով բարեկարգված ներքին բակը, որը նախատեսվում է տեղադրել նաև նստարաններ:
- **Վելոտրեկ/հեծանվաուղի՝** 220մ երկարությամբ և 2մ լայնությամբ Երկու մասնաշենքերի պարագծով նախատեսված է :
- **Բարեկարգվող տարածքն** ընդգրկում է մնացած ողջ տարածքը, որտեղ 1407 մ² մակերեսով տարածքի վրա նախատեսվում է ստեղծել սիզամարգեր և տնկել եղևնիներ (կանաչապատման նախագիծը հաստատված է Երևանի

քաղաքապետարանի կողմից), որի հետագա խնամքը կհանձնվի մարզադպրոցի տնօրինությանը:

Մարզադպրոցի գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 3](#)-ում: Հիմնական ճարտարապետահատակագծային լուծումներն ինքն են:

Մասնաշենք N1-ը նախատեսված է տարածքի երկայնքով, իսկ մասնաշենք N2-ն իր կիսակոր հատակագծով, տեղակայված է լինելու գոյություն ունեցող հեծանվաուղու եզրագծերի մեջ: Երկու մասնաշենքերի նախասրահները բացվում են մարզիկների ու հանդիսատեսների առջև Բագրատունյաց փողոցի և «Գործարանային» մետրոյի կողմերից:

Ավտոմեքենաների մուտք մարզադպրոցի տարածք չի նախատեսվում: Մասնաշենքերի հակահրդեհային մուտքը ու ելքը ապահովված են Արշակունյաց պողոտայի կողմից «VLV electronic» խանութի կողքով, այդ մուտքով են դուրս գալիս նաև ռասնաշենքերի վթարային տարհանման ելքերը: Տարածքում պիկ ժամին կարող են գտնվեն առավելագույնը 500 մարդ:

Բեմը նախատեսված է 250 հանդիսատեսների համար, որի տակ երկու կողմերից տեղակայված են սանհանգույցները: Գլխավոր մուտքի կողմից նախատեսվում է հենաշարժային խնդիրներ ունեցող մարդկանց համար տարածք, որոնց համար մուտքերում նախատեսված են նաև թեքահարթակներ: Բեմը երեսապատված է ՕՇՈ սալերով, որոնք համապատասխանում են ինտերիերի հետ և պլաստիկ նստարաններ տեղադրումը պարտադիր չէ:

Մինչև մուտքին հասնելը՝ դեպի դահլիճ, բաշխիչ նախասրահում (1-1) հոսքը մարզիկների ու հանդիսատեսների բաժանվում է առանց խաչվելու: Հանդիսատեսները անցնում են իրենց դռնով դեպի տրիբունները, իսկ մարզիկները իրենց մուտքով՝ դեպի հանդերձարանները, որից հետո իրենց մուտքով անցնում են դահլիճ, կամ բարձրանում են աստիճաններով պարի հարթակ (2-24): Նույն նիշի վրա է գտնվում նաև տնօրենի աշխատասենյակը, հաշվապահությունը, կադրերի բաժինը, մարզիչների սենյակը, սանհանգույցները և հավաքարարի սենյակը:

Նախատեսված է նաև ճաշարան, որն ապահովվում է հեշտ հասանելիություն ինչպես մրցումների ժամանակ հանդիսատեսի համար, այնպես էլ էվակուացիոն աստիճանների կողմից՝ այգում հանգստացողների համար: Ապահովված է կապը մասնաշենքերի միջև, որտեղից հեծանվային մարզադպրոցի աշխատողները նունպես կարող են մոտենալ ճաշարանին: Նախատեսված է նաև մոտեցում ճաշարանին նաև Հայաստանի հեծանվային սպորտի փառքի թանգարանից: Միմետրիկ տրիբունների նկատմամբ հարթակը կարող է օգտագործվել ուշուի կամ ֆենշու մարզաձևերի համար՝ դեպի հարթ տանիք տանող ելքով:

Մարզադահլիճի կախովի առաստաղը լուծված է գիպասատվարաթղթով՝ ալիքների տեսքով, մետաղական ֆերմաների արանքներում, որը հնարավորություն է տալիս պարապմունքների ժամանակ մինչև 12մ բարձրությամբ նետել գնդակը:

Դահլիճում նախատեսված է օդափոխման ներածման և արտածման համակարգ, որը իրականացվում է 2 ռեկուպերացիոն ներածման և արտածման ագրեգատներով:

N1 և N2 մասնաշենքերի արտաքին պատերը նախատեսված են 200մմ հաստությամբ խարամաբլոկից, արտաքինից պատված ջերմամեկուսիչով (70մմ հաստությամբ բազալտե բամբակ, ճակատի՝ երեք գույնի ֆիբրոցեմենտե սալեր «LATONIT»):

Տանիքը իրականացվում է «TEGOLA» տանիքային համակարգով: Մետաղական ֆերմաները կաթիլաձև են՝ 13մ թռիչքով, մարդակները 160x80մմ չափսերով, ինչպես նաև իրականացվում են OCII-3 և «TEGOLA» գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտեր:

Մասնաշենք N2-ի հարթ տանիքի վրա նախատեսվում է կառուցել արևային ֆոտովոլտային էլ. կայան, 200-240 պանելներով, յուրաքանչյուրը 315 Վտ, որոնք կապահեվեն լրացուցիչ 63-75 կՎտ հոսանք, որը շատ կարևոր է էլեկտրական մարտկոցներով ջեռուցելու համար (ինֆրակարմիր ջեռուցող մարտկոցներ «CWC company»):

Մարզադպրոցի սաները գլխավոր մուտքից անցնում են բաշխիչ նախասրահ (1-1) և որտեղից կամ ֆիզիկական պատրաստության դահլիճ (երկու դահլիճ, երկու նիշի վրա 1-8 և 2-38) իրենց հանդերձարաններով, կամ բաշխիչ միջանցքով՝ յուրաքանչյուրն իր խմբակի սենյակը՝ հանդերձարանով (9 խմբակ – 70-90 աշակերտ):

Խմբակային սենյակներն ունեն ելք ու մուտք հեծանվուղու կողմից, խմբակային սենյակների շարքի վերջում գտնվում է հեծանիվ վերանորոգողների սենյակը և բժշկի սենյակը:

Բոլոր սենքերը օդափոխվում են բնական եղանակով՝ ներքին բակի միջոցով, որում պահպանված են գոյություն ունեցող ծառերը (դեղձենի, ծիրանենի, թթենի):

Երկրորդ հարկում նախատեսվում է մարզադպրոցի վարչական մասը, մարզիչների սենյակը, պահեստները, հավաքարարի սենյակը, ժողովների սենյակը՝ էլքի հնարավորություն դեպի պատշգամբ:

Հարկերի բարձրությունը հատակից առաստաղ կազմում է 3,3 մ:

Տանիքը ծածկվում է «TEGOLA» տանիքային համակարգով: Խարամաբետոնով ստացված են թեքությունները ջրահեռացման համար - 0,003%:

Երկրորդ հարկում նախատեսված է Հայաստանի հեծանվային սպորտի փառքի թանգարան, որտեղ կարելի է կազմակերպել դասախոսություններ և տեսացուցադրումներ:

Տարածքը լուսավորելու համար տեղադրվում են լապտերասյուներ՝ ֆոտովոլտային էլեմենտներով:

Գլխավոր հրապարակը՝ մուտքերի առաջ, թեքահարթակները դեպի խմբակային սենյակները, սավաճքները և հեծանվուղին կառուցված են խճի վրա 200մմ հաստությամբ և երկշերտ ասֆալտբետոնե 6սմ և 4 սմ հաստությամբ ծածկույթով: Հարթակների մուտքերը, աստիճանները, եզրաքարերը բազալտից են: Նախագծով նախատեսված է մագլցող բույսերի համար (բաղեղ, վայրի խաղող) գոյություն ունեցող պարիսպներին ամրացնել փայտե ձողերից ճաղեր: Հրշեջ մեքենաների մուտքը կազմակերպված է Արշակունյաց փողոցի կողմից, որի նպատակով նախատեսվում է տեղադրել մետաղական դարպաս՝ 5մ լայնությամբ 3մ բարձրությամբ:

Մարզադպրոցի հիմնական նախագծային ցուցանիշները բերված են ստորև ներկայացված աղյուսակ 1-ում, իսկ մասնաշենքերի նախագծային բաժանումները ըստ հարկերի աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1. Նախագծվող մարզադպրոցի հիմնական ցուցանիշները

Ցուցանիշ	Միավոր	Ծավալ
Ընդհանուր տվյալներ		
Մասնաշենքերի թիվը	հատ	2
Մարզադպրոցի նախագծվող տարողունակությունը	սան	262
Ընդհանուր հողատարածքի մակ.	մ ²	4195
Կառուցապատման մակ.	մ ²	1813
Կանաչապատման մակերես	մ ²	1407
Հրապարակներ և ճանապարհներ	մ ²	975
Այլ ցուցանիշներ		
Ուսումնական սենյակների թիվը	հատ	14
Ցնցուղարան	հատ	40
Լվացարան	հատ	47
Զուգարանակոնք	հատ	33
Բացօթյա սպորտային վելոտրեկ	գծ.մ.	220
Ասֆալտապատման գոտու մակ.	մ ²	1050
Հիմնական սենյակների մակերեսը		
Պարի հարթակ	մ ²	94
Մարզադահլիճ	մ ²	800
Ֆիզպատրաստության դահլիճ	մ ²	160
Բուժկետ	մ ²	28
Մարզիչների սենյակ	մ ²	25
Սանհանգույց/ ցնցուղարան	մ ²	183
Ինժեներական ցանցեր		
Էլ. սնուցում	կվտ-ժամ	214.4
Գազամատակարարում	մ ³ /ժամ	72
Ջրամատակարարում	լ/վրկ	2.3
Կոյուղի	լ/վրկ	3.9
Ջեռուցում		
Կաթսայատան մակերես	մ ²	39
Կաթսաների քանակ	հատ	2
Կաթսաների պահանջվող հզորություն	կվտ-ժամ	300
Տաք ջրամատակարարում		
<i>Ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչներ</i>		
Էլ. ջրատաքացուցիչ V=100լ	հատ	9
Էլ. ջրատաքացուցիչ V=300լ	հատ	4

Աղյուսակ 2. Նախագծվող մասնաշենքերի նախագծային բաժանումները ըստ հարկերի

Մասնաշենք	Նախագծվող սենյակները		
	1-ին հարկ	2-րդ հարկ	3-րդ հարկ
«1»	նախամուտք, պահակակետ, նախասրահ, բժշկի սենյակ, հանդերձարան, սանհանգույց, ցնցուղարան, մարզադահլիճ, բեմ, պահեստ, անվտանգություն	միջանցք, հավաքարարի սենյակ, սանհանգույց, պարի հարթակ, մարզչական սենյակ, տնօրենի սենյակ, հաշվապահի սենյակ, կադրերի տեսուչի սենյակ, բուֆետ, խոհանոց	փառքի թանգարան, ֆենշույ
«2»	նախամուտք, պահակակետ, բժշկի սենյակ, նախասրահ, հանդերձարան, սանհանգույց, ցնցուղարան, էլեկտրավահանակ, ֆիզպատրաստության դահլիճ, նախամուտք, անվտանգություն, սանհանգույց, խմբակային սենյակ, հեծանիվ վերանորոգողների սենյակ	փառքի թանգարան, նախասրահ, հանդերձարան, սանհանգույց, ցնցուղարան, նախամուտք սանհանգույց, ժողովների սենյակ, ֆիզպատրաստության դահլիճ, պահեստ, հավաքարարի սենյակ, մարզիչի սենյակ, հրահանգիչների սենյակ, բազայի վարիչի սենյակ, կադրերի տեսուչի սենյակ, հաշվապահի սենյակ, ուսմասվարի սենյակ, փոխտնօրենի սենյակ, տնօրենի սենյակ	տեխնիկական սենյակ

3.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ներկայիս գոյություն ունեցող մարզադպրոցը գործող է և ապահովված է անհրաժեշտ բոլոր կոմունիկացիաներով (գազամատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում և այլն):

Նախագծվող մարզադպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) և տեխնիկական պայմաններին համաձայն գոյություն ունեցող քաղաքային ջրագծից և կոյուղագծից, որոնք անցնում են Բագրատունյաց փողոցով:

Ինչպես ներկայումս, մարզադպրոցի ջրամատակարարումը ապագայում ևս նախատեսվում է իրականացնել Բագրատունյաց փողոցով անցնող d=300մմ ջրագծից d=89մմ տրամագծի մետաղական խողովակով, մակերևութային ջրահեռացումը նախատեսվում է միացնել Բագրատունյաց փողոցով անցնող d=500մմ տրամագծով հեղեղատարին, իսկ կոյուղաջրերի հեռացումը կիրականացվի d=800մմ տրամագծով քաղաքային կոյուղագծին միացումով՝ d=200մմ միջոցով:

Տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է $Q_{max}/վրկ=2.3$ լ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 2.5 լ/վրկ (1 շիթ): Տաք ջրի մատակարարումը կիրականացվի շենքի ներսում տեղադրվող ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչներից

Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել ինքնահոս՝ de 50-110մմ տրամագծի պոլիվինիլքլորիդային խողովակներով՝ 3.9լ/վ ելքի քանակով: Կոյուղու

կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ՝ կոյուղու համակարգում առաջացած խցանումները վերացնելու նպատակով: Կոյուղու ներքին ցանցի կանգնակները կտեղադրվեն շախտաներում՝ ստուգիչների հատվածում ունենալով դռնակներ:

Անձրևաջրերի հավաքվում են և կենտրոնանալով նախատեսված ջրիս ձագարներում և de 160, 200, 250 տրամագծի խողովակներով հեռացվում են Բագրատունյաց փողոցով անցնող հեղեղատարին:

3.3. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխություն

Մարզադպրոցի ջեռուցման համակարգերի, ինչպես նաև օդափոխման համակարգերի ջերմամատակարարումը նախատեսվում է իրականացնել նորակառույց կաթսայատան միջոցով: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել երկու $Q=300$ կՎտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ, որոնք համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով: Տաք ջրամատակարարման համար տեղադրված են 1000լ տարողությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումը իրականացվում է կաթսայից և մարզադպրոցի տանիքում տեղադրվող արևային ջերմատաքացման համակարգից: Կաթսաներն ունեն ցածր աերոդինամիկական դիմադրություն, ուստի ծխագազերի հեռացում իրականացվում է բնական եղանակով:

Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը, որը կաթսաների այրիչներին մատակարարվելու է արտաքին ցանցից: Գազի ծախսը կազմում է $72\text{մ}^3/\text{ժամ}$, որը կմատակարարվի գոյություն ունեցող համակարգից: Ջերմատարը հանդիսանում է ջուրը՝ $60-80^\circ\text{C}$ ջերմաստիճանային էջքով:

Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները ($C_{\text{NO}_2}=0.03$ մգ/մ³, $C_{\text{CO}}=0.006$ մգ/մ³) գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի ծխնելույզի միջոցով, որը համապատասխանում է СНИП 2.04.05-91 պահանջներին, ունի 350 մմ տրամագիծ և 9 մ բարձրություն:

Մարզադպրոցում նախատեսվում է արհեստական շրջանառությամբ ջերմային ստորին մատակարարմամբ փակուղային երկխողովակային ջրային ջեռուցման համակարգ:

Մարզադպրոցի օդափոխության համակարգը կատարվել է ՀՀ գործող նորմերին համապատասխան, համաձայն որի նախատեսված է օդափոխման ներածման և արտածման համակարգ, որն իրականացվելու է երկու ջերմության ռեկուպերացիայով ներածման և արտածման ագրեգատներով: Ագրեգատները համալրված են ներածման և արտածման օդամուղներով, էլ. օդատաքացուցիչով, օդահովացուցիչով, ֆիլտրերով, ջերմափոխանակիչով, ավտոմատ կառավարման համակարգով, որը ծրագրավորվում է գործարանում: Ցնցուղարաններից, ֆիզպատրաստության դահլիճից օդի արտածումը կատարվում է կանալային օդամուղներով: Սանհանգույցներում նախատեսվում է

բնական արտաձման համակարգ՝ օդատար խողովակներով, որոնք դուրս են գալիս տանիքից:

Մարզադպրոցի էլ. մատակարարումը կատարվում է համաձայն տեխնիկական պայմանների և գործող նորմերի ու կանոնակարգի:

3.4. Շինարարական աշխատանքների կազմակերպում

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Հիմնական աշխատանքներն իրենց հերթին բաղկացած են ներկայիս գոյություն ունեցող կառուցի ապամոնտաժման աշխատանքներից և նախատեսվող նոր մարզադպրոցի 2 մասնաշենքերի (ներառյալ օժանդակ կառույցների) շինարարական/մոնտաժման աշխատանքներից:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի արտաքին տարածքի սահմանագատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով,
- գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում
- ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող մարզադաշտի տարածքում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

- *Քանդման/ապամոնտաժման աշխատանքների* իրականացում այնպիսի հերթականությամբ, ինչը թույլ կտա հիմնական ապամոնտաժումն իրականացնել շինության երկու կողմից՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները: Ապամոնտաժման աշխատանքների դեպքում կկիրառվեն պաշտպանիչ ցանցեր, որոնք մասնաշենքի ապամոնտաժման ընթացքում կապահովեն բանվորների և շին. անձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից: Մարզադպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը կկազմակերպվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ խստագույնս պահպանելով անվտանգության ՇՆԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» կանոնները:
- *Շինարարական/մոնտաժման աշխատանքների* իրականացում, որի ժամանակ կիրականացվեն նոր մարզադպրոցի 2 մասնաշենքերի շինարարական աշխատանքները: Մասնաշենքերի կառուցման ընթացքում ավտոկոունկի, բետոնապոմպի տեղակայումը և աշխատանքը առնվազն երկու կողմից ապահովելու նպատակով առաջարկվում է սպորտային համալիրի մասնաշենքերի կառուցման հերթականությունը սահմանել՝ առաջին հերթին մասնաշենք 1-ի կառուցում, ապա մասնաշենք 2-ի կառուցում: Հիմնական մասնաշենքերի կառուցումից հետո նախատեսվում է կաթսայատան և այլ հարակից շինությունների շինարարական աշխատանքների իրականացումը: Սպորտային համալիրի մասնաշենքերի

կառուցման հերթականության առաջարկվող տարբերակը ենթակա է ճշտման՝ շինարարության ընթացքում:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է Երևան քաղաքի տարածքում: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակի համեմատաբար ազատ տարածքները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, մեխանիկական արհեստանոց, կիսափակ պահեստ, ինչպես նաև բիոզուգարան:

Աղյուսակ 3. Առաջարկվող ժամանակավոր տնտեսության շենքեր և շինություններ

h/h	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգիա, կՎտ	Ծանոթագրություն
1	Աշխղեկի գրասենյակ	1	8.6 x 3.1	6	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7 x 3.0	6	կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	1	7.25 x 2.9	7.2	կոնտեյներային
4	Կիսաձածկ պահեստ	1	10.0 x 5.0		-
5	Մեկ տեղանոց բիոզուգարան	1	D 1.3	1	-

Շինհրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 4](#)-ում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված Երևանի Աջափնյակ վարչական համայնքի համապատասխան բաժինների կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների մոտեցումը շինհրապարակ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցով, իսկ աշխատանքը և տեղակայումը՝ ապամոնտաժման ենթակա սպորտային համալիրի մասնաշենքերին կից տարածքներում:

Շինարարական նյութերի և կոնստրուկցիաների տեղափոխումը շինարարական հրապարակ, աղբի և ապամոնտաժված էլեմենտների տեղափոխումը աղբավայր, իրականացվելու է ավտոմոբիլային տրանսպորտով Երևան քաղաքի ասֆալտապատ ճանապարհներով:

Կապալառուն պետք է աշխատանքները կազմակերպի այնպես, որպեսզի նշված ճանապարհները գործեն շինարարության աշխատանքների իրականացման ընթացքում, չխախտելով ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության պահանջները:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն ունի չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի շինարարական արդյունաբերության թերբեռնված հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով: Այն նախատեսվում է տեղափոխել 13 կմ հեռավորության վրա գտնվող Նուբարաշենի խճուղուն հարող քաղաքային աղբավայր:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 6500 կգ, պարբերաբար կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

3.4.1. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարական մեքենա-մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվական կարգով և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանից կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ*

h/h	Անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ
1	5 ավտոինքնաթափ	10տ բեռնունակություն	3
2	Ավտոամբարձիչ	բեռնատվությունը 36տ	1
3	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ3	2
4	Ավտոբետոնապոմպ	10մ ³ /ժամ արտադրողականությամբ	1
5	Կոմպրեսոր	արտադրողականությունը 10մ ³ /ր	1
6	Հետահար մուրճ	ՄՕ-10	3
7	Բուլդոզեր	59կՎտ	1
8	Էքսկավատոր	0.65 մ ³ շերտի տարողությամբ	1
9	Ինքնագնաց գլոն	առնվազն 6տ	1
10	Ձեռքի տոփիչ	40կգ	2
11	Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ	-	1
12	Ջողման ապարատ պողպատի համար		1
13	Ջողման ապարատ պոլիէթիլենի համար		1
14	Խորքային վիբրատոր	Իվ	2
15	Մակերևութային վիբրատոր		2

*մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 2տարի և 7ամիս, որից 3.5 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող շինության ապամոնտաժման աշխատանքների համար:

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համապատասխան նորմատիվային տվյալների (ԵՏՊ) համաձայն:

Բանվորների առավելագույն քանակը, ներառյալ այլ տնտեսությունների (օժանդակ տնտեսություններ), կկազմի 50x1.3=65մարդ::

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 67 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 2 մարդ,
- բանվորներ՝ 65 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսությունները):

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների, աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով, ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

3.4.2. Քանդման և հողային աշխատանքներ , օգտագործվող բնառեսուրսներ

Քանդման աշխատանքներ: Մարգադպրոցի քանդման (ներառյալ՝ շենքերի հիմքերի) աշխատանքների ծավալները գնահատվում են 1197 մ³, որից 101մ³ ետլիցքի նպատակով կօգտագործվի նկուղային տարածքների համար: Քանդման արդյունքում մնացած 996 մ³ ծավալով շին. աղբը կտեղափոխվի 13 կմ հեռավորության վրա գտնվող Նուբարաշենի աղբավայր: Դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը կազմակերպելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված ծավալներին համապատասխան: Այս աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ որպես նախատեսվող գործունեության Պատվիրատու:

Հողային աշխատանքներ: Հողային աշխատանքերը ներառում են տարածքի հարթեցումը (ուղղաձիգ նշահարում) և գրունտային հարթակի ձևավորում (կտրում, լիքք հարկ եղած դեպքում): Ապամոնտաժման աշխատանքներից հետո առաջացած փոստրակների նախատեսվում է լցափակել մինչ ուղղաձիգ նշահարման վերին նիշը:

Խրամուղիների և փոքր փոստրակների մասնակի հետլիցքը նախատեսվում է իրականացնել ավագից և օգտակար հանույթի ընտրված փափուկ բնահողերից՝ մանրակրկիտ տոփումով: Մնացած հետլիցքը կիրականացվի օգտակար հանույթի բնահողերից, տոփանումով:

Մարգադպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 3959 մ³, որի հիմնական մասը նախատեսվում է օգտագործել ետլիցքի նպատակով (գրունտի ետլիցք հիմքերում և խրամուղիներում՝ 2190մ³, գրունտի հետլիցք նկուղային տարածքում՝ 101մ³, հողաբուսաշերտ՝ 591մ³): Մնացած 1178 մ³ ծավալով շին. աղբը ևս կտեղափոխվի քաղաքային աղբավայր:

Բնառեսուրսների օգտագործում:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Որպես կանոն, քաղաքային պայմաններում/բնակավայրերում իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայում քաղաքային ջրամատակարարման ցանցը, իսկ շինարարության ընթացքում կապալառուի կողմից նախագծվում (շինարարության արտադրության նախագիծ՝ ՈՍՔ) և կառուցվում է մեկ համակարգային ժամանակավոր ջրամատակարարման ցանց շին. հրապարակի համար, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը: Այդ նախագծում ներառվելու են ջրի մատակարարման ձևը, եղանակը, միացման աղբյուրը (կետը և ձևը), ժամանակավոր ջրագծի տրամագիծը և այլ ուղեկից հարցերի լուծումները:

Շինարարական հոսքաջրերի հեռացման վայրը, ձևը, եղանակը կորոշվի կապալառուի կողմից՝ շինարարության արտադրության նախագիծի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը հիմնականում կօգտագործվի.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Ջրցանը նախատեսվում է իրականացնել ջրցան մեքենաներով, որի համար ջրի աղբյուր կհանդիսանա տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագիծը: Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 1850 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 1850 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 88 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 1850 \times 2 \times 0.0015 \times 88 = 488 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 682 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսություններ) թվաքանակ, 67 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 67 \times 0.025) \times 682 = 1164 \text{ մ}^3$$

Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ $488 \text{ մ}^3 + 1164 \text{ մ}^3 = 1652 \text{ մ}^3$

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շին. հրապարակի տարածքը սահմանափակ է, իսկ շինարարությունում ներգրավված բանվորների հիմնական մասը Երևան քաղաքից և մոտակա բնակավայրերից են և հերթափոխից հետո գնալու են իրենց բնակատեղի, ապա ցնցուղարանի տեղակայումն անհրատեսական է:

Շին. հրապարակում նախատեսված գրասենյակային տարածքն ապահովված է լինելու լվացարանով, աթոռներով, սեղանով, պահարանով, որից կարող են օգտվել նաև բանվորները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա՝ հաշվի առնելով բիոզուգարանների քանակը՝ ելնելով օրական աշխատող բանվորների առավելագույն թվաքանակից:

3.4.3. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախագգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումները:

Աղյուսակ 5. Անվտանգության նախագգուշական միջոցառումները ե/բ կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Խախտման հնարավոր հետևանքները	Խախտման պատճառը	խախտման նախագգուշական միջոցառումները
Դարսակի քանդվում, ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3 ⁰ -ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիրների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում, ճուպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (сгребовка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կարճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճուպանի լարում	Նախագգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռե-ժիմի անհամապատաս-խա-նություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում, քան տրված է անձնագրում): Չնախատեսված	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ ուսումնասիրություն

	աշխատանքային շարժումների համատեղում	
Էլեկտրական տրավմաներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Ձայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրկված և մշակված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրաերթ բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում	Աշխատանքների կազմակերպման նախագծով (ԱԿՆ) հաստատված տեղաշարժման ուղեգծի շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբառձիչ մեխանիզմների ուղեգծի վրա: Ամբարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավորության գերազանցում	Աշխատանքների իրակա-նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության, ոչ պակաս քան 1մ, պահպանում
Բանվորի ժամանակից շուտ հոգնածություն, գլխապտույտ և փսխում	Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, զազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, զազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում
Մրսածության հիվանդություններ և ցրտահարում	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ, ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգազիր - թույլտվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես, առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին և կախվում է ամբարձիչի մոտակայքում տեսանելի վայրում

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում նվազագույն հեռավորությունը 1մ է:

Ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 0,5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է ճանապարհին հանդիպող առականերից բարձր լինեն 0,5մ: Թույլ չի տրվում տեղափոխվող էլեմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում:

Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առասանման եղանակները պետք է բացառեն վերնաշխատանքները (верхолозные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլտվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման գոտին լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի խցիկից /կաբինայից/, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվում են ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համաձայն իրավասու մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտը:

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:
2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:
3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո:

4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:
5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:
6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների սանիտարական պայմանների ապահովում:
7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներգրավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի (եթե այդպիսիք կան) տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահոված կլինեն ջրով և կոյուղով:
8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:
9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնման աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ՝ էսթետիկ տեսքը:

4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Գործունեության տարածքը Երևան քաղաքի Գործարանային մետրոյի հարավարևմտյան մերձակայքն է: Տարածքը խիտ կառուցապատված է և ընդգրկում է Բագրատունյաց փողոցի վերջնամասերի հարավային կողմը, իր բազմաթիվ կառույցներով և կանաչապատ պուրականման տարածքներով: Մինչ տարածքի կառուցապատումը (հիմնականում գործարաններ և պահեստային համալիրներ) այստեղ եղել են բլրաթմբեր և դելյուվիալ լանջեր, որոնց հարթեցման կամ դարավանդների վերածելով, կառուցապատվել են բազմաթիվ շենքեր և շինություններ, այդ թվում նաև ճանապարհներ և փողոցներ, ինչպես նաև մերձակայքում առկա է նաև «Էրեբունի» անտառատնտեսությունը մոտակա բլրալանջին:

Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տեղամասը գտնվում է Երևան քաղաքի ծայր հարավարևելյան եզրամասում, որը Արարատյան կուտակային դաշտի հյուսիսարևելյան եզրամասն է: Մինչև կառուցապատումը բավական հարթ, փոքր թեքություններով տարածք է եղել և հանդիսացել է փոքր ձորականման տարածք, իր այլուվիալ, պրոլյուվիալ առաջացումներով հանդերձ: Բացարձակ նիշերը տատանվում են՝ 933.0 – 936.0 մետրի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Տարածքը բավական հարուստ է գրունտային ջրերով, քանի որ տեղամասը հանդիսանում է Արարատյան արտեզյան ավազանի մի մասը: Բուն տարածքում գրունտային ջուր չի հանդիպել մինչև 12.0 մ հորատման ընթացքում:

Ֆիզիկաերկրաբանական տեսակետից նախագծվող տարածքում Տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթներից առկա են մակերեսային էրոզիա, ջրոդողում մթնոլորտային տեղումներից:

Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միոպլիոցենի հասակի լճա-ծովային նստվածքները, որոնք ներկայացված են կավային գրունտներով, տեղ-տեղ անցում են ճալաքարի, կոպճի, ավազի և կավավազի ենթաշերտերի: Այս նստվածքները ծածկված են չորրորդական ժամանակի լճա-այլուվիալ և հրաբխային ապարներով, որոնք ներկայացված են կավերով, ճալաքարերով, գլաքարերով, տուֆերով և այլն, վերջիններս ծածկված են անկանոն հզորության ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքի տեսակետից կատարված հորատման աշխատանքների, ֆոնդային նյութերի հիման վրա, կարելի է տարածքում առանձնացնել հետևյալ երկրաբանալիթոլոգիական շերտերը (վերնից-ներքև)՝

ա) Շերտ 1^ա 0.0-0.1 Ասֆալտ լավ վիճակում, տարածված է մարգահամալիրի տարածքում և նրա շրջակայքում: Ժ1§17^ա-V

բ) Շերտ 1^բ 0.1-1.0 Լիցք՝ խճային և մանրախճային կազմի, ծառայում է որպես հիմք ասֆալտի ծածկույթի համար, իսկ որոշ տեղերում հանդիսանում է շին.աղբ և ծառայել է տարածքի հարթեցման համար: Ունի սահմանափակ տարածում: Ժ1§24^բ-III

գ) Շերտ 1 0.0-0.4 Բուսահող մոխրագույն, կոպճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով, ավազակավային կազմի: Բեկորային նյութը լավ, միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Տարածված է մարգահամալիրի շինություններից և ճանապարհներից ազատ տարածքներում: Ժ1§9^գ-II

դ) Շերտ 2 Կավային գրունտ շագանակագույն, աստիճանական անցում բաց շագանակագույնի, կոպճի պարունակությամբ 5-10%-ի չափով: Բեկորային նյութը լավ, միջին և թույլ հղկվածության է, թույլ խոնավ, կիսապինդ թանձրության, ներկայացված տարբեր ապարներով: Ունի լայն տարածում, տեղ-տեղ անցում ավազակավի կամ կավավազի: Չորրորդական հասակի լճա-այլուվիալ առաջացումներ: Ժ1§8^դ-IV

ե) Շերտ 3 Ծալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, չոր, միջին խտության: Բեկորային նյութը լավ, միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Գրունտը տարածված է կավային շերտի տարբեր խորություններում՝ 1-2 և ավելի շերտերով, որոնք անհամասեռ են թե հորիզոնական և թե ուղղաձիգ ուղղություններով: Չորրորդական հասակի լճա-այլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: Ժ1§6^ե-IV

զ) Շերտ 4 Ավազ մոխրագույն, մանրահատիկ, հանդիպել է միայն թիվ 6 հորատանցքում՝ 0.4 մետր հզորությամբ, ճալաքարակոպճային և

ավագակավային գրունտների միջև: Չորրորդական հասակի
այլուվիալ առաջացումներ: Ժ1Ջ27^վ II

Է) Շերտ 5 Ավագակավային գրունտ բաց շագանակագույն, տեղ-տեղ անցում
կավավազի, կոպճի պարունակությամբ մինչև 5%-ի չափով: Բեկորային նյութը լավ,
միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Ունի լայն
տարածում կտրվածքի ստորին հատվածներում՝ 6.0-8.0 և ավելի խորը մետրերում:
Չորրորդական հասակի այլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: Ժ1Ջ33^գ III

Տեղանքի ինժեներատրիարաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ
նախագծվող մարզադպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

4.2. Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման
նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, Երևան քաղաքը գտնվում
է սեյսմիկ *երրորդ գոտում*, գրունտների հնարավոր արագացման առավելագույն
մեծությունը կազմում է $A_{max} = 0.4g$ և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության
աստիճան:

4.3. Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Երևան քաղաքը գտնվում է չոր ցամաքային կլիմայական պայմաններում,
չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով: Ձմեռը սկսվում է սովորաբար նոյեմբերի II
տասնօրյակում և ավարտվում մարտի վերջերին: Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ
երկարատև, կայուն ձյան ծածկույթը լինում է ոչ ամեն տարի: Հունվարի միջին
ջերմաստիճանը՝ $0-5^{\circ}\text{C}$ է, օդի մինիմալ ջերմաստիճանը՝ -31°C է, իսկ հուլիսի մաքսիմալ
ջերմաստիճանը՝ 41°C : Օդի հարաբերական խոնավությունը՝ 76% է, թույլ քամու
առկաությամբ՝ 1.8 մ/վրկ արագությամբ (ձմռանը): Հուլիս ամսվա օդի միջին
ջերմաստիճանը՝ 21.5°C է, հարաբերական խոնավությունը՝ 50%, գերակշռում են լեռնա-
հարթավայրային քամիները՝ 1.1 մ/վրկ արագությամբ:

Տարեկան տեղումների քանակը հասնում է 280-340 մմ-ի, համաձայն ՀՀ
օդերևութաբանական կայանների դիտարկումների: Ձյան շերտի բարձրությունը՝ 42սմ,
իսկ ճնշումը՝ 50 կգ/մ²:

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը՝ 0.6 մետր է ըստ ՀՀ
օդերևութաբանական կայանների տվյալների:

4.4. Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի գետնամերձ շերտում աղտոտվածության
մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի
նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն»
(ՇՄՆՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՇՄՆՄԿ-ի 2018թ.-ի տարեկան հաշվետվության,
ուսումնասիրվող տարածքին ամենամոտ օդային ավազանի գետնամերձ շերտի

մշտադիտարկումների ստացիոնար դիտակետում (դիտ. 2) օդային աղտոտիչների՝ փոշու մասնիկների, ազոտի և ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները կազմել են համապատասխանաբար 0.132 մգ/մ³, 0.015 մգ/մ³, 0.03 մգ/մ³: Վերջիններս չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

4.5. Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Երևանի Շենգավիթ համայնքի Բագրատունյաց 48 հասցեի մարզադպրոցի սեփականությունը՝ Երևանի քաղաքապետի 29.06.05թ. հ. 1398-Ա որոշման, ՀՀ կառավարության 26.01.06թ. հ. 46-Ն որոշման հիման վրա (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման բերված է [հավելված 2](#)-ում):

Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում և հողատարածքը ամբողջությամբ օգտագործվում է մարզադպրոցի կողմից:

Մարզադպրոցի նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին բակային տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ (դենդրոնախագիծ՝ ծառաթփատեսակային բուսականության կազմով և քանակով), որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ (տես՝ [հավելված 5](#)): Դենդրոնախագծի համաձայն, տարածքը նախատեսվում է կանաչապատել սիզամարգերով և տնկել թվով 15 եղևնիներ:

ՀՀ Կառավարության 1404-Ն որոշման համաձայն, շինարարական աշխատանքների ժամանակ հանվող [հողաբուսաշերտը](#) (591 մ³ և 30 սմ հզորությամբ) նույնպես նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման և նոր սիզամարգերի ստեղծման աշխատանքների համար:

Մինչ վերաօգտագործումը հողաբուսաշերտը կույտերով նախատեսվում է պահպանել շին. հրապարակում՝ դրա համար նախատեսված առանձին տեղամասում: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են մոտ 2 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը կպահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտի պահման համար նախատեսված շին. հրապարակի տեղամասի համար պետք է ապահովվի, որպեսզի այն լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, լրացուցիչ բուսահողը (շուրջ 75մ³) նախատեսվում է բերել 30կմ հեռավորությունից, որը կիրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

4.6. Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող մարզադպրոցի տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող բուն տարածքում գրունտային ջրերը գտնվում են ավելի քան 12 մետր խորությունում:

4.7. Բուսական աշխարհ

Մարզադպրոցի տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, որտեղ բացակայում են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակներն ու կենդանիները, ինչպես նաև միգրացիոն ուղիները: Մարզադպրոցի տարածքի հարավային գոտին ներկայացնում է որպես ծառապատ կանաչ գոտի, որը գլխավոր հատակագծում մնում է անփոփոխ: Այստեղ աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ: Կենտրոնական մասում, որն ընկած է կառուցապատվող տարածքում, առկա են ոչ խիտ տեղակայված մրգատու և դեկորատիվ ծառեր, որոնք խնամված չեն և հիմնականում գտնվում են չորացած վիճակում: Կրկնակի հետազոտությունների արդյունքում, որին մասնակցել է նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնի ներկայացուցիչը, որոշվեց հատվել այդ տարածքի թվով 15 ծառերը և դրանց փոխարեն տնկել եղևնիներ (15 հատ):

Նախատեսված է այս կանաչապատ տարածքի ամբողջական ոռոգում՝ ձկափողերի օգտագործմամբ: Տարածքի կանաչապատման նախագիծը՝ հաստատված Երևանի քաղաքապետարանի կողմից, որը ներառում է նաև ոռոգման սխեման, բերված է [հավելված 5](#)-ում:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով կառուցապատվող մարզադպրոցի տարածքը:

5.1. Օղային ավազանի վրա ազդեցություն

Նախատեսվող գործունեության ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման (առանց պայթեցումների), բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ q/վ, որտեղ՝}$$

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէոզոլային մասնիկների, 0.02

K_3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.4

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K_6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B –ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս կամ
4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն :
Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 3 959 մ³ կամ 6 727 տոննա:
6 727 տոննա /704 ժամ = 9.55 տ/ժ

$$Q=(0.05 \times 0.02 \times 2.4 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 9.55 \times 10^6) / 3600 = 0.15 \text{ գ/վ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.15 \text{ գ/վ} \times 704 \text{ ժ} / 2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.38 \text{ տ}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի մարզադպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և նրանց արագ գրավիմետրիկ նստեցումը: Հետևաբար կանխատեսվում են, որ արտանետումները չեն գերազանցի թույլատրված նորմերը, իսկ հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կբացատրվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ: Շինարարության կապալառուն պարբերաբար պետք է իրականացնի շինհրապարակի ջրցանում, շինարարական մեքենաների երթևեկությունը կազմակերպվի համապատասխան չափաքանակներով, ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չգերազանցի 30կմ/ժ արագությունը):

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային սվյալների հետ:

5.2. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակներ գնահատվում են գործող մարզադպրոցի շենքի քանդման ընթացքում, սակայն հաշվի առնելով այն, որ ամբողջովին քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով՝ բացառելով խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Աղմուկի մակարդակը կկառավարվի համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացմամբ: Հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

5.3. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր կեղտաջրերի արտահոսքերը և արտանետումները:

5.4. Ազդեցություն հողի վրա, թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ և շին աղբ:

Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողի արտաքին շերտի աղբոտվածությանը: Դրանից խուսափելու նպատակով ԲԿՊ-ում նախատեսված են միջոցառումներ, մասնավորապես առաջացած թափոններն ու աղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և պահվելու է Երևանի քաղաքային աղբավայրում:

Հարկ է նշել նաև, որ շին. աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր վնասակար նյութերի արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունն ինչպես նշվեց կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Գործունեության ընթացքում նախատեսվում են նաև կենցաղային աղբի կառավարման միջոցառումներ, մասնավորապես նախատեսվում է աղբամանների տեղադրում և գոյացած աղբի կանոնավոր հեռացում:

5.5. Ազդեցություն բուսական աշխարհի վրա

Նախատեսվող գործունեության ընթացքում ազդեցության կենթարկվեն տարածքում առկա որոշ ծառեր: Հաշվի առնելով դրանց անխնա և կիսաչորացած վիճակը, ինչպես նաև նորակառույց մարզադպրոցի ավելի բարեկարգված տարածք ունենալու կարևորությունը՝ կիրականացվի տարածքի թվով 15 ծառերի հատում: Նախատեսվում է նաև նշված հատվածից հեռացնել շինաշխատանքների ընթացքին խանգարող ինքնաբերաբար աճած թփերը: Նախատեսվող գործունեության շրջանակներում նախատեսված կանաչապատման աշխատանքների շրջանակում տարածքը կհամալրվի սիզամարգերով (1407մ²) և կտնկվեն թվով 15 գեղատեսիլ եղևնիներ: Տարածքի կանաչապատման նախագիծը համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ և բերված է [հավելված 5](#)-ում:

Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության, մասնավորապես կանաչ գոտու պահպանության միջոցառումները ներառվել են ԲԿՊ-ում:

Շինարարության և հետշինարարական փուլերում կիրականացվեն տարածքում առկա ծառերի և թփերի վիճակի մշտադիտարկում/վերահսկում ծրագրի պատվիրատուի՝ ՀՀ ՔԿ-ի կողմից մշակված մոնիտորինգային ստուգաթեթին համաձայն:

5.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ մեշ ուշադրություն կդարձվի հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շին. կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին: Հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի:

5.7. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- Հրդեհի առաջացում
- Հեղուկ նյութերի արտահոսք
- Աշխատողների վնասվածքներ
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես [հավելված 9](#)), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՀԲԿ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Բնապահպանական կառավարման պլան

Նախագծի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Ծրագրի համար մշակված ԲԿՊ ներկայացված է [Հավելված 6](#)-ում:

ԲԿՊ-ն ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

6.2. Մոնիտորինգ

ՀՀ ՔԿ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՀ ՔԿ-ի կողմից իրականացնելու են մոնիտորինգի դաշտային ստուգայցեր, որի արդյունքները կգրանցվեն մոնիտորինգի ստուգաթերթիկում (ձևաչափը ներկայացվում է [Հավելված 7](#)-ում):

ՀՀ ՔԿ-ն հանձնարարությամբ տեխնիկական վերահսկողն իրականացնելու է ամենօրյա հսկողություն: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՀՀ ՔԿ-ին նկատված թերությունների և անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում ([Հավելված 8](#)) լինեն ազդակիրների կողմից ստացված համապատասխան բնույթի գանգատներ:

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2020թ. հունիսի 25-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության մարզադահլիճում (Բագրատունյաց 48 հասցեում) իրականացվել է դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ. հունիսի 13-ի համարում:

Հայաստանի Հանրապետության ՀՀՔԿ
12.06.2020 թ. 10:10 (7328)

ժողովուրդների կառուցվածքի համար: Լուս 2. Առևտրային հարկի և Առևտրային փոխարկի N 84 հասցեում գտնվող / ծանկյալի՝ 02-001-0191-0070 / 1408 թնակավայրերի նամակադրոցի հաստատված կառուցարարական հորդանա՝ հաստատված նամակադրոցի ժողովուրդների կառուցվածքի համար:

Պայմանագրի ստորագրված են մտեցնում մասնադրոց, հորդանատում ինժեներառևտրային ենթակառուցվածքներ առկա չեն և հորդանատի նկատմամբ սահմանափակումներ են ստեղծվում չկան: 1Ճ-ի մեկնարկային զինց հասցեի կառուցվածքի մտքերի 80%-ի չափով, նախալուրջ՝ մեկնարկային զինցի 85%-ի չափով: Չափի չափը հասցեի մեկնարկային զինցի 85%-ի չափով: Լուս 3. Առևտրային հարկի Տնօրեն Մեծի փողոց N 84 հասցեում գտնվող / ծանկյալի՝ 02-001-0044-0080 / 07 թնակավայրերի նամակադրոցի հաստատված կառուցարարական հորդանա՝ հաստատված նամակադրոցի ժողովուրդների կառուցվածքի համար: Պայմանագրի ստորագրված է մտեցնում մասնադրոց, հորդանատում ինժեներառևտրային ենթակառուցվածքներ առկա չեն և հորդանատի նկատմամբ սահմանափակումներ են ստեղծվում չկան: 1Ճ-ի մեկնարկային զինց հասցեի կառուցվածքի մտքերի 80%-ի չափով, նախալուրջ՝ մեկնարկային զինցի 85%-ի չափով: Չափի չափը հասցեի մեկնարկային զինցի 85%-ի չափով: Պայմանագրի ստորագրված են թվին 10.07.2020թ. մասնադրոցի համար դիմելի մտքերային և ամրապայման հանձնարարված են: 0228 3-10-08:

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 25 ժամը 12.00-ին Երևանի հարկային Բագրատունյաց փողոց 48 հասցեում գտնվող մարզադպրոցում տեղի կունենան «Պեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների» կառուցման նախագծի և Հրայկա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Մարզադպրոցների կառուցման նախագծին և ՀԱՍԳ հայտին կարող են ծանոթանալ «ԳԳԸ» ՍՊԸ-ում

Հասցե՝ Երևան, Կիեյան 16, էլ.փոստ՝ hgsnvh@gmail.com, հեռ.՝ 010274306 Վ. Գովառախյան:

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրայկա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին՝ 74 օրենքի /21.06.2014թ. 70-110-Ն, ինչպես նաև 73 կառավարական որոշման մասին՝ 2014 թ. 07.07.01 թվականի հրահանգի համաձայն:

Մարզադպրոցի կառուցման աշխատանքային նախագծի և ԲԿՊ-ի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ՀՀ ՔԿ-ի, ՀՀ ՇՄՆ, ՀՀ ԳԿՍԵՆ և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքերում՝ գործող հանրային ծանուցման ընթացակարգին համաձայն (հանրային քննարկումը անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ):


Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ կառուցվող դպրոցի նախագծային կազմակերպությունից և ՀՀ ՔԿ-ից: Քննարկման արձանագրությունը և մասնակիցների ցանկը ներկայացվում է [Հավելված 10](#)-ում:

ՀՀ ՔԿ կողմից ենթաձրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անձազանքման մեխանիզմ (ԲԱՄ): ԲԱՄ-ի հիմնական գործառնությունները ներկայացված են ԲԿՊ-ում, իսկ բողոքների գրանցման ձևը բերվում է [Հավելված 8](#)-ում: Շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՀՔԿ-ի պաշտոնական կայքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.atdf.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՆՈւթՅԱՆ ԻՐԱԴՐՈւթՅԱՆ ՍԽԵՄԱ և ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈւթՆՎՈւթՅՈւՆԸ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԵՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԹՅԱՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՆԱԳԵՏԱՆԱՍԿԱԳՑՍԵՒՆ ԱՌԱՋԱՐԿԱՔ)

N 01/18-072-15005-222 12.03 2020թ.

Form with fields for applicant information, address, and legal details. Includes sections for 'Օրինվում է' (is established) and 'Գտնվելու վայրը' (location). Contains handwritten entries and official stamps.

Form with numbered sections 9.6 to 27. Includes a table with columns for 'Գնահատման արժեքը' (valuation) and 'Գնահատման հիմունքները' (basis). Contains handwritten entries and official stamps.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՏ. Գ.Տ.



Հ.ՄԱՐԻԹՅԱՆ

ԲԳ/1721/062

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՑԱԿԱՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 305-065

ՆՊԱՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՈՒՄԸ Քանդակահանք

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿ Սարգսյանի պատկերասրահի համար

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱԾԸ (մա) 0,4195

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ պերսոնալ անկախություն

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 305-065-001

ՆՊԱՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՈՒՄԸ հասարակական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿ Վարչական գեղ

ՄԱԿԵՐԵԱԸ (քառ. մ.) 837,1

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ պերսոնալ անկախություն

ՇՆՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գ/Գ	ԿԱՂԱՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿ	ՄԱԿԵՐԵԱԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
2	305-065-002	Ձրակալում	45,2	պեր. ան. ի.
3	305-065-003	սահորդակ	38,0	պեր. ան. ի.

Լրացուցի՛ր: նշումներ, փոփոխություններ

Կատարողներ Ս. Վարչական
(ստորագրություններ)

Ս. Վարչական
Կ. Կանխարկայան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ


(մասշտաբ)


1-2	70,2	հարկանակ շարժարկ աստիճան
2-3	37,1	հարկանակ շարժարկ աստիճան
3-4	78,5	Սարգսյանի սահորդակի շարժարկ
4-5	4,7	—
5-6	4,7	—
6-7	12,4	—
7-8	1,1	—
8-9	1,0	սահորդակի շարժարկ
9-10	4,0	—
10-11	49,75	—
11-12	35,4	—
12-13	1,5	—
13-14	6,0	—
14-1	49,35	—


1	Վարչական գեղ
2	Սահորդակ
3	Սահորդակ

Կատարող Ս. Վարչական
(ստորագրություն)


ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ









Առաջին հարկի հատակագիծ



Երկրորդ հարկի հատակագիծ



Երրորդ հարկի հատակագիծ



Տանիքի հատակագիծ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Մ1:500

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

Գ/Գ	Անվանումը	Քանակը	Չափերը, մ	Ծախսվող էներգ. կվտ	Ծանոթություն
1	2	3	4	5	6
1	Աշխերի գրասենյակ	1	8.6x3.1	6.0	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7x3.0	6.0	կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	1	7.25x2.9	7.2	կոնտեյներային
4	Կիսածածկ պահեստ	1	10.0x5.0	-	-
5	Մեկ տեղանոց զուգարան	1	D1,3	1.0	-

Ծանոթություն:

- Շինարարական հրապարակը ունի սահմանափակ տարածք: Շինարարական հրապարակը սահմանափակվում է ավտոճանապարհով, գոյություն ունեցող շինություններով / ավտոնկակներով, սպորտային համալիրի շենքով, օդային մալուխագծով և այլ կառույցներով:
- Նախքան ապամոնտաժման աշխատանքների իրականացումը շինարարական հրապարակը սահմանափակվում է ժամանակավոր ցանկապատով 265մ ընդհանուր երկարությամբ/ հովհարով, լուսավորությամբ: Որպես ժամանակավոր ցանկապատ կարող են ծառայել գոյություն ունեցող շենքերի և ցանկապատի պատերը:
- Ցանկապատի կառուցվածքը պետք է համապատասխանի զՈՍՏ 23407-85 պահանջներին:
- Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայումը առաջարկվում է իրականացնել առաջին հերթին գոյություն ունեցող շինություններից և բուսականությունից մաքրվող տարարում, իսկ ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵ
	ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	ԱՌԿԱ ՏՐԱԳԻԾ
	ԱՌԿԱ ՔԱԶ
	ԱՌԿԱ ԿՈՅՈՒՂԱԳԻԾ
	ԱՌԿԱ Բ/ԱՌՄԱՆ ՀՆՈՒՂԱԳԻԾ
	ԱՌԿԱ ԱՆՉՐԵԿԱՑՐԵՐԻ ԿՈՅՈՒՂԻ
	ԱՌԿԱ ԱՍՅԱՆԱԲԵՏՈՆԵ ԶԱՆԱՊԱՀՆԵՐ

- ժամանակավոր ցանկապատ
